Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարար

_________ Վ. Գաբրիելյան

18 հոկտեմբերի 2011 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ

_________________ Գ. Խաչատրյան

22 սեպտեմբերի 2011 թ.
N 41

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

## «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնություն-ների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերա-զանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի չեմը) գերազանցող մասի համար:

Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջա-նում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշ-վանցվում (պակասեցվում) են՝ հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար, օրենքով սահմանված կարգով և չափերով, Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից գանձված (գանձման ենթակա) ԱԱՀ-ի գումարների չափով, եթե սույն օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ապրանքների ներմուծման պահին»:

Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասին հաջորդող պարբերության համաձայն՝ «օրենքի 3 հոդվածի հա-մաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող են հաշվանցել ԱԱՀ վճարող դառնալու պահին առկա վաճառքի նպատակով ապրանքային մնացորդի ձեռք բերված ապրանքների մասով մատակարարների կողմից տրամադրված հաշվարկային փաստաթղթերում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարա-րագրերում) առանձնացված և նախկինում չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները»:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդ-վածով *պաշտոնապես պարզաբանում եմ.*

Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում նշված գումարներով օրենքով սահմանված դեպքերում, կար-գով և չափերով հաշվանցումներ կատարում են.

1) այն անձինք, որոնք ներմուծման օրվա դրությամբ համարվել են ԱԱՀ վճարող,

2) այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից իրականացրած գործարքները օրենքի համաձայն դիտ-վում են որպես ապրանքի մատակարարում:

Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասին հաջորդող պարբերության համապատասխան հաշվանցումներ կատարում են այն անձինք, որոնք ապրանքների ներմուծման կամ ձեռքբերման պահին գրանցված են եղել որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող: